

քեզ եւ խաղաղութի յԱյ մերմէ, եւ ի Տնէ
ամենակալէ Յսէ Քսէ եւ ի Սրբոյ Հոգւոյն
կենարարէ եւ առատածիր պարգեւատուէ, եւ
ամենունակ շնորհողէ եւ մարդասիրէ: Ամէն:

Ահնութիւն Հօր, պահպանութի Որդւոյ,
նախախնամութի Ամենասր Հոգւոյն միշտ եւ
հանապազ եղիցի ի վերայ քո, եւ լցուցէ
դքեզ փառօք, պատուօք եւ արգասալիւր ճո-
խութիւր իբրեւ զորթս եւ որպէս զոսոս սա-
ղարթախիտ եւ պտղալից դրախտ տնկեալ ի
դնացս Հոգւոյն վտակաց, կալ մնալ քեզ խա-
ղաղական կենօք եւ պարագայց ամօք ընդ
երկայնաւուրս: Ամէն:

Այլ եւ ահնեսցէ դքեզ Տր Ած մեր, եւ
տացէ քեզ հոգի դիտութե, միտք զգօնու-
թե, բան իմաստութե, խորհուրդ մաքրու-
թե, վարս պարկեշտութե, կրկին կենօք եւ
երկու աշխարհօք: Ամէն:

Եւ ընդ սիրալրական գրոյս յայտ լիցի
ածասէր մեծութեդ, զի այս տարոյս վիշտ եւ
նեղութի որ պատահեցաւ ողորմելի եւ տա-
սապեալ ազգիս, վասն հաքամոց եւ աւա-
ղակաց կողմանէ զի չորս եւ հինգ քարաւան
դարկին, եւ բազումք ի կենաց բարձին, եւ
բազումք կիսամեռ վիրաւորեցին, եւ ինչքն
կողոպտեցին, զոր մի բստ միովէ դրելն մե-
ծափառութեդ ձանձրութի վարկաք: Դար-
ձեալ յայտնի լինի քասէր եւ իմաստախոհ
դիտութեդ, Ջուղայեցի վաճառական ոմն
Գրիգոր անուն, որ մականուամբն յորջորջի
դէվաջի, Իզմիր քաղաքն մեծամեծ առ եւ
տուր առնէր, եւ ինքն էառ ըստ հասարա-